

կերկարացնէք նրան, աւելի բազմազան կը դարձնէք նրան:

Կար ժամանակ, երբ պահանջները և եւրոպական յոյները չէին համարձակուիմ պատերազմել թիւրքոյ լծի դէմ, ինչպէս որ այժմ չեն համարձակուիմ նոյնքանել Փոքր-Ասիայի յոյները և հայերը, իսկ արեւն էին թափում, լուռ էին մեռնում, ինչպէս այսօր արեւն են թափում և լուռ են մեռնում Փոքր-Ասիայի հայերը և յոյները...

Բայց վերջապէս պատկանները միաձայն բարձրացրին պէնքը:

Ո՞վ կարող է երաշխաւոր լինել, որ Փոքր-Ասիայի ազգաբնակչութիւնը ժամանակով զենք չի բարձրացնի:

Միթէ՞ դորանով կը վճովե աւրելեան խնդիրը, — ոչ, նա միայն կերկարանայ:

Այսօր վեր կացան եւրոպական թիւրքիայի հպատակները, — չինոյ, տաւ տարուց յետոյ կը վեր կենան առիական թիւրքիայի հպատակները:

Միթէ՞ դորանով վճովում է արեւելեան խնդիրը:

Եթէ Եւրոպան կամենում է թիւրքաց իշխանութեան անդունաբարութիւնը պահպանել, թող պահանջէ թիւրքիայից լայն և հաւասար մարդկային իրաւունքներ նորա բոլոր և ոչ — թուրքական ցեղին պատկանող հպատակների համար: Իսկ կը կարողանայ արդեօք թիւրքիան իրազործել այդ պահանջը, կատարել իր խօսքը,

զլուխ բերել խոտառացած վերանորոգութիւնները... Երբեք:

Եթէ Եւրոպան ցանկանում է ազատել թիւրքաց լուծից միայն թիւրքիայի եւրոպական նահանգները և դորանով կարծում է վրձնել արեւելեան խնդիրը, — այն ժամանակ նա կարող է հաւատացած լինել, որ չինոյ, շատ շատ տաւ տարուց յետոյ նրա առաջ կրկին կը յարուցվի արեւելեան խնդիրը, և կարելի է աւելի յուսահատ, սարսափելի կուտվ...

Կարող է՞ արդեօք Եւրոպան երաշխաւոր լինել, որ այն ժամանակ նա իր տականքները կը խցէ, որ չը լսէ միլիոնաւոր մարդիկների հուռանքները, միայն այն պատճառով, որ յուսահատ, գուցէ օրհասական կոիւր կը կատարվի ոչ թէ Եւրոպայում, այլ Փոքր-Ասիայում...

Թող Եւրոպան այժմ վճով արեւելեան խնդիրը, և վճով նրան տրամադական կերպով, եթէ ոչ հարկաւոր չէ մեծ մարդարէ լինել նախագուշակելու համար, որ գուցէ մօտիկ տպագայում, նրան հարկաւոր կը լինի կրկին վճովել այդ խնդիրը:

Եթէ Եւրոպան ցանկանում է թիւրքաց իշխանութիւնը անխախտ պահպանել, նա պէտք է պահանջէ նրա բոլոր հպատակների համար հաւասար մարդկային իրաւունքներ: Բայց դորանով զեռչի վճովե արեւելեան խնդիրը, այլ նորից կը յարուցվի քանի մի ժամանակից յետոյ:

Եթէ կը բաւականանայ միայն նորանով, որ կարծուի թիւրքերին Եւրոպայից Փոքր-Ասիա, դարձեալ քանի մի ժամանակից յետոյ յարութիւն կառնէ նորա առջև արեւելեան խնդիրը իր հաւաքանքներով, արեւաշագան, զենքը ձեռին:

Ուրեմն ի՞նչն մէջն է կայանում արեւելեան խնդրի արմատական լուծումը:

Են ցեղերը, որոնք անընդունակ են պետական կեանքին, ինչպէս մօնղոլական ցեղը, պէտք է պատմութեան անաչառ գաւառ վճով զրկված լինեն իրաւունքից ցանկանալ պետական կեանքով ապրելու, մանաւանդ երբ պետական կեանքին անընդունակ ցեղի ձեռքում տանջվում են և ոչնչանում են քաղաքակրթական կեանքին ընդունակ, արիական և սեփական ցեղին պատկանող միլիոնաւոր մարդիկ:

Կամենում է արդեօք Եւրոպան տարածել քաղաքակրթութիւնը Եւրոպական թիւրքիայում և Փոքր-Ասիայում, վերադարձնել քաղաքակրթական ազդերը եւրոպական քաղաքակրթութեանը, — այն ժամանակ նա պէտք է հասկանայ, որ թիւրքաց իշխանութիւնը մի անանցնելի արգելք է թէ պալեան ցեղի, թէ Փոքր-Ասիայի ցեղերի մէջ քաղաքակրթութիւնը տարածելու համար:

Պատմութիւնը անողորմելի է:

Եզդերի գոյութեան համար կուի մէջ և ընդհանուր մարդկա-

յին զարգացման մէջ պատմութիւնը զրկում է պետական կեանքի գոյութեան իրաւունքից այն ազգութիւններին, որոնք ապացուցին իրանց անընդունակութիւնը պետական կեանքով ապրելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅ

Յուլիսի 27-ին

«Մշակ» № 53-ի ներքին լուրերում կարգադրելով իբր թէ «Այստեղ գետեղած մի քանի վանկայի հայեր աղերսաբար դիմեցին Վեհ. կաթողիկոսին, որպէս զի Նորին Օծովութիւնը միջնորդէ Ռուսաց Ազգային Կոյսեր առաջն մեր թշուառ եղբայրակիցների համար Փոքր-Ասիայում: Լուր հազորդողը բոլորովին սխալ է հազորել, աստի եւ հարկ եմ համարում սորանով յայտնել խոսքիս: Նորին Օծովութեան պատգամից մի բազմաաւարտ աղերսագիր գետն անցանքները տաճկահայոց մասին ոչ թէ վառնցի հայերի կողմից, որոնք այստեղ չը կան և չեն եղել, այլ բազում ամբողջ հայ հասարակութեան կողմից: Բազում հայ հասարակութիւնը, ինչպէս այլ ազգային ղեկավարում այնպէս և ներկայ հանգամանքներում անաւարտ չէ, նա միշտ հետաքրքրվում է թիւրքիայում առկա հայոց միջակով, մանաւանդ վերջին ժամանակներս այնտեղ կատարուած հարստահարութիւններից յետոյ: Բազում իւր աղերսագրով աղաչում է Վեհափառին, որ նա իբրեւ Հայր փաթայ ամբողջ ռուսահայոց և Մարդ Աթոյի կողմից թախանձել Ազատարար Կայսրին և Նորին Վեհովութեան առջև միջնորդել Եւրոպային՝ թիւրքիայեան մեր համարին եղբայրների թշուառութիւններին վերջ տալու: Եւ միւս քրիստոնէից փրկութեանը նորանց մասնակից անելու համար: Եւ որ Նորին Օծովութիւնը իբրեւ քաջ հովիւ ամենայն միջոց գործադրէ և իւր անձը անդամ, եթէ պէտք լինի, անխնայ գոհ է իւր հօտի խեղճ մեծամասնութեան համար փոքր ի շատեւ մարդակալի ազգայն պատրաստելու: Որովհետեւ ամենքը համոզուած են, որ եթէ ներկայ պատերազմից յետոյ տաճկահայոց վիճակը չը փոխուի զգալի լաւք՝ ապա այնուհետեւ կեանքը նոյա համար անտանելի և միան-

ցաւութեան հարկ ստանալ իր կատարներից ճիշդ կերպով և որով քանակութեամբ...

Եթէ մենք, հայերս, գիտենայինք օգտուէա կերպով գործ գնել մեր դաւանորդներ, մենք վաղուց արդէն կարող էինք անհամեմատ աւելի շատ գործ կատարել, քան թէ քան, երեսուն տարի շարունակ սերբիացիները, չէրնոգորցիները, բոսնիացիները, բուլղարները և բուլղարացիները կատարում են: Բայց այն մեծ դրամական միջոցներն էլ ունենալու, որ ունեն հայերը, նրանց մէջ կազմված էին մասնագործները, որոնք նպատակ էր նիւթապէս օգնել իրանց թշուառացած հայրենակիցներին: Բայց սորանից նրանք ունեին մասնագործներ, որոնք ուղարկում էին իրանց ներկայացուցիչներին, պատգամաւորներին Եւրոպայի բոլոր մայրաքաղաքները: Ս. Պետերբուրգ, Վոսկրա, Բերլին, Փարիզ, Լուսն, Բրնէզ, Վիեննա, Լոնդոն... Այնտեղ երկտասարդը գալիս էր, մանում էր ամեն չորջանները, ներկայացնում էր իր երկրի և ազգի գործիչները, նկարագրում էր իր հայրենակիցներին, թշուառութիւնը, յայտնում էր իր ազգի պահանջները, մուտք ունէր խմբագրութիւններ, լից սկսած մինչև միլիոններով կարիւսները, զրկում էր հասարակական կարծիքը, կազմել էր տալիս իր ազգի ցուցիչն համարող մարդիկ, զական միտնողներ (ժողովներ)։ Եւ ինչպիսի փող որ վճարէ ամենամեծաւոր լրագրների աշխատակիցներին, որ նորա գրեն յոգուածներ, թարգմաններ, տաւ իր հայրենիքի լրագրութեանից և զրկանութեանից այս կամ այն պատանի յոգուած, վերջապէս ինչն էլ գրում էր, թարգմանում էր: Եւ այս ինչ մայրաքաղաքում հասարա-

կական կարծիքը բաւական գրգռելուց յետոյ, եւրոպական այն ինչ մեծ կենտրոնի մասնող և քաղաքական կենտրոն վրա ազդեցութիւն ունեցող մասը համակրութիւնը զգալի իր թշուառ հայրենիքը զբաւելուց յետոյ ճանապարհ էր ընկնում զէպի տրիշ մայրաքաղաք: Քիչ ժամանակից յետոյ գալիս էր մի այլ երկտասարդ և փոքր ինչ տրիշ ձեռք սկսում էր նայն պրօպագանդա: Այն ինչ բան կարելի է փողով անել, ահա ինչ բան կարելի է անել խելացի կերպով փողը գործ գնելով, և ազգայնական ու մարդասիրական գգացմունքով ոգևորված լինելով...

Բայց ներքին, ընթերցող, պէտք է վերջացնեմ քեզ հետ խօսակցութիւնը: Արդէն ուշ է դառնում, մոտ հանգչում է, գրիչս ձեռքից ընկնում է, աչքերս փակվում են... Բայց էլ մի քանի խօսք... Իմ առաջ ներկայանում է հեռեկալ պատկերը:

Երբեք մէջ տեղ ընկած մի քարձրաւանդակ ամբարնոց շրջապատող անտառի մէջ տղամարդկանց և կանանց մի փոքրիկ խումբ լի էր խոսման:

Կանանց միջից մէկը, որ թէ էր չինում, մեկնելով մի բաժակ իր դիմաց նստած սիրունուտեւ երկտասարդին հարցրեց՝ «Արեւոյ դուք յոյս ունե՞ք միանալ զօրին հետ»:

— Իզոյրում, պատասխանեց երկտասարդը:

— Եւ ուղղակի պատերազմ էք մտնելու, ասաւ:

— Եւ օրիորդ, միայնակ զօրին հետ:

— Զր կարծեմ, մինչև կը ժողովվի կամաւորների խումբը, որ մենք միլիոնայի պէս դիտաւորութիւն ունենք կազմելու, քանի մի ամիս կը տեւի: — Ո՞րքան մարդիկ են կազմում ձեր խումբը

ը և ինչ զեր պէտք է խաղաք դուք:

— Մենք դիտաւորութիւն ունենք, ինչպէս միշտ եղել է անցեալ պատերազմներում, հայերից կազմել մեր հաշուով մի փոքրիկ խումբ կամաւորների, որոնք առաջնորդվելով մի հմուտ վիճակագրական ձեռքով, նպատակ կանենան, մինչև որ ռուսաց զօրքը առաջ կերթայ արեւելով թիւրքիայի երկրները, մենք քրդերից գործված առաջակութիւններին զէմ կենանք, հայ ժողովրդին նրանց ձեռքով հասցնելու վնասներին առաջն առնենք: Ակզում մենք երեք կուսնենանք 200 կամաւորներից ոչ աւել:

— Յետք է, ցնորք, թիւրքահայապաշտ հայերին անկախութիւն չեն տալ, մէջ ընկաւ զեղնած զէմքով մի երկտասարդը: — Յետվածք զուր էք, եթէ կարծում էք թէ մենք գնալու ենք հայոց ինչիցը վճելու: Իմ կարծիքով եթէ թիւրքիայի հայերին անկախութիւն կամ ինքնավարութիւն տաւ, այդ եւրօպական մեծ պետութիւնների քաղաքական հաշիւը կը վնասէ: Այդ կազմից հայերը իրանց սեւ փական ոյծելով ոչինչ նշանակութիւն չունեն: Մենք այդ կողմից միայն խօսք ունենք և ոչ ոյծ: Բայց, ինչպէս ասացի, մեր նպատակը նայն է, ինչ որ էր միշտ Ռուսաստանի թիւրքիայի և Պարսկաստանի հետ պատերազմների ժամանակ կազմել հայերից կամաւորների խումբ, մեր սեփական հաշիւով, որ միլիոնայի պէս ռուսաց զօրքին հետ առաջ գնալով, թէ պահպան զօրք կազմի, թէ պաշտպանի հայ զիւղերը զանազան վայրերի ցեղերի տաղաւթութիւններից: Մեր նպատակը ուրեմն մասնաւոր է և սահմանափակ: մենք ուզում ենք հայ ժողովրդին ժամանակաւոր ցուրեղից պաշտպանել և ազատել... — Ար պաշտպանեք և կազմաւոր, կրկնեց զեղ-

նած երկտասարդը. 500 քուրդ ժողովկեն՝ ձեզ ջարդ ու փշուր կանեն...

— Ի՞նչ վնաս, ձեզ պէտք էր իմ մեծ յոյս և ապաւեն:

— Կուսիմ:

— «Իսկ այն երեք օրիորդներ, որոնք գնացին այսօր երևան, ինչ են անելու»: հարցրեց խօսակցութիւնը սկսող կիցը:

— Նրանք մտաղիւ են օգնելու հիւանդներին և վերաբերվածներին:

— Բայց նոքա բժիշկ չեն:

— Մեր մէջ երեք երկտասարդ բժիշկ էլ կուսնենանք:

— Երեք երկտասարդ բժիշկ և երեք օրիորդ, վնասվածից մաղձաւոր:

Հեռու նստած էր մի մանկահասակ կին: Նա վեր կացաւ տեղից և ձեռքը դնելով երկտասարդին ուսին՝ «Սպասիր, ասաց, միայն վաղը, եւ էլ կը գամ քեզ հետ»:

— Վնասք, ասաւ երկտասարդը և լի սիրով համբուրեց ուսին դրած փոքրիկ ձեռքը:

Նայն միջոցին նորանցին լուսինը ցած ելաւ արեւմտեան կողմից քարձրացող լուսնի քամակը:

Ցանկաւոր են աչքերը բաց արի, հայեացքը գրցեցի ինձ չընդադառող առարկաների վրա... Եւ իմ գրանդանիս մօտ էի նստած... զրկու մամանակ զրկու ձեռքից ընկաւ և քանո տարաւ... Պատահանից նայեցի՝ դանդաղ լուսինը դեռ իր զէնիտի վերա էր երեւում...

Այս ամենը... արեւն երազ էր... ամիսս...

— Ինչ կատակի ժամանակ գաւթ, կամ ինձ ընթերցողը:

Ի՞նչ անեմ... Հայ, միթէ գո՞ւ կատակ չես ասելից մինչև գլուխը...

Ասիացի

գտնուած անհայտը կը գտնուի: Այստեղացիք յոյս ունեն, որ լայնը առաջադրող հասարակութիւնները եւ չափով այնպիսի արեւմտագիր կը գրեն Վեհափառին, և որ նա անշուշտ կատարելու է ժողովրդի խնդիրը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» № 48 մէջ գծի տակ տպւած էր մի յօդուած «Թիւրքաց Հայաստան» վերնագրով: Այդ յօդուածը մասամբ իր մէջ պարունակող նիւթերի գաղափարներն անպարզութեան պատճառով, մասամբ ևս այն պատճառով որ նիւթը մեզ ուղարկեցաւ հայերէն լեզուով արտասահմանեց և բնագրական «Independence Belge» լրատուագրի այն համարը չը կարողացանք ձեռք բերել և յօդուածի հետ ծանօթանալ: անգիրտակցաբար վերաբերեցինք ամբողջ յօդուածը բնագրական լրագրին, այն ինչ այժմ նամակ ենք ստացել: Եւ թարգմանողից, որտեղ նա խնդրում է մեզ ծանօթութիւն ապել մեր լրագրում, որ բնագրական լրագրից վերցրած էին միայն առաջին 15 տողերը, իսկ այն պարբերութիւնից որտեղ ապրիլ 1-ի «Այդ տողեր տեղի են տալիս հեղինակին հետեւեալ գաղափարներին» մնացած գրովածը պատկարում է թարգմանողի սեփական գաղափարները, և այդ պարբերութեան մէջ անգիրտակցաբար խմբագրութեան կողմից մտաւ մի սխալ: Փոխանակ առկուած տեղի են տալիս հեղինակին, այնպէս լինելով տեղի են տալիս մեզ, կամ ինչ և այլն: Պարտաւորութիւն ենք համարում կատարել այս Վ. Բ-ի խնդրերը ուղղել այդ սխալը:

«Донская Пчела» լրագրի արտատպելով ուստիս լեզուով «Մշակի» № 48-ի մէջ տպւած «Թիւրքաց Հայաստան» վերնագրով յօդուածը, հակառակ է մեր արած անգիրտակցական սխալը, և թարգմանելով յօդուածը և փակագծի մէջ գրեւորով «Переводъ съ армянскаго (Мшахъ № 48)» լրատուագրի վերաբերում է բնագրական լրագրին միայն առաջին տողերը, որոնց և գնում է նշանագրի մէջ, իսկ նորանից յետոյ պարզ երևում է որ մնացած յօդուածը վերաբերում է հայոց հեղինակին:

Հայոց Վրաստանի և իմերէթի թեմական գաղութների վերադաստիպ պ. Յակոբ Տէր-Յովհաննիսեան խնդրում է մեզ յայտնել որ Թիֆլիսի հայոց ծխական գաղութներում այս տարի ուսում սկսվում է օգոստոսի 29-ին: Ինչպէս նորին, նոյնպէս և հին աշակերտները և աշակերտուհիները պէտք է վճարեն տարեկան երեք բուրջ գաղական պիտուքների համար, որը բնորոշ է օգոստոս ամսի մէկից առաւօտեան 9 ժամից մինչև մէկը տեղիս վիճակային կոնսիստորիայում Տէր-Գեորգ քահանայ Գալստեանց, որից աշակերտները կը ստանան ապահովագիր: Աշակերտների և աշակերտուհիների բնութագրութիւնը կը շարունակվի մինչև սեպտեմբերի 5-ը:

ԲԱԳՈՒՅԻՑ մեզ գրում են՝ «Այստեղ այս րօպէս ստորագրութիւն է բացված հարստահարված տաճկահայերին նպատակելու համար և յոյս կայ որ նշանաւոր գումար հաւաքվի»:

ԹԻՖԼԻՍԻ հայոց կուլուած յօդուած կարմիր խաչի ընկերութեան տուած երկիրից գոյացաւ 460 բուրջ արդիւնք:

Հետագիրը հաղորդեց որ յուլիսի 24-ին ՍՍՄԱՆԻ քաղաքում Գրեգոր յայտնվեցաւ ոստիկան արեւելեան քառու ժամանակ: Քաղաքի ամենալաւ մասը այրվեցաւ: Բնակիչները կրած վնասները աչացին են: Քաղաքը լի է այժմ բազմաթիւ աղքատներով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԱՆԻ ՄԷՋ ՀԱՐԱՍԱՀԱՐԱՌԻՆԵՐ

(Շարունակութիւն) *

Մայիս 7. Այսօր Գաւառի Կոլեզիոյ 50 կամարը քուրջ գործերով Վան եկաւ: Բայց գետ նոքա Վան չը հասած, արդէն մի քանի գիւղերէ խեղճ հայեր փախած Վան եկած:

* Տես «Մշակ» № 55.

կը լայն կ'ողջային թէ ահա քուրջեր եկան մեր գիւղերը բոլորովն կողոպտեցին և աւերեցին, ոչ ուտելիք հաց թողցին, ոչ խոզ ոչ ոչնար, ոչ հագնելիք զգեստ և ոչ ուրիշ ու է բան: Մին հին փաւաքաւ ալ չէ մնացած այժմ որ հողին վրա փռեմք տունն մէջ նստած ատեն: Մինչև իսկ գնացին դաշտն աշխատող մեր կիներ ևս կողոպտեցին:

Այս գիւղացիների թափած արտասուքներն տեսած ատեն մարդ քարէ սիրա պէտք էր ունենալ որ դիմանար:

Մարգարէ լինել հարկ չէ, ամեն քնթերցող ինքնին կրնայ գուշակել թէ առաջնկայ տարի սարսափել սով պիտի տիրէ Վանի կողմեր: զի գիւղացիների ամբարներին մէջ գտած ցորենի և ուրիշ պաշարների մի մասն կտաւարութիւնն առաւ իւր զօրքերի համար և փող չը վճարեց, մնացածներն ալ քուրջերն կողոպտեցին: Իսկ այս տարի, թէև շատ առատ և բարեբեր, հունձներ երեսի վրա մնացին դաշտերին մէջ: ոչ ոք քուրջերին ահէն չը համարձակեցաւ գաշտ երթալ և իւր ցորեն կամ ուրիշ բաներ հընձել: Ինչ՞հա՞ Վասպուրականցիներ: Ինչ պիտի ուտեն առաջնկայ տարին:

Շատ լաւ կը լինէր որ ապագայի վրա խորհող զգայուն և խոհեմ անձեր այժմէն իսկ փութային մի մասնաժողով կազմէ և ապագայ ստակալ չարիքներին առջևն առնուի: Համար խորհրդակցելու և դարման տանելու կանխաւ: Վասպուրականցի յետոյ օդն ոչ այնքան դուրին է, ոչ ալ այնքան օդաւորութիւն թունալ է որ պահանջ կանխաւ պատրաստուիլ և միջոցներ խորհիլ որ փանդին առջևն առնուի:

Մայիս 8. Այսօր հռչակուած շէյխ ձեւալէտուն 1200-ի չափ քուրջ կամաւորներով քաղաք եկաւ: Սոքա ճանապարհին վրա որ հայաբնակ գիւղի որ պատահի են, բոլորովն կողոպտեց և ասէր զարձուցեր են զայն: Շատ հայեր ալ որք համարձակեր են դժգոհութիւն յայտնել իւրենց այս վարմունքի դէմ, զարկեր վերաւորեր են:

Վանէն դէպ հարաւ Ծ ժամի չափ հեռի գտուող Անգո հայաբնակ գիւղի բնակիչներն կանխաւ իմանալով քուրջերի գալուստ և ուրիշ գիւղերի մէջ նոցա քործած սարսափելի գաղափարներն, կիներն և աղջիկներն կը լեցունեն եկեղեցիին մէջ իբր ապահով տեղ և իւրեանք լինելու սարեր կը փախէին:

Քուրջերն երբ Անգո կը հասնին, կիմանան այս եղած և եկեղեցիին դուռներ խորտակելով և ամպուղներ դնելով, չորս կողմէն ներս կը խուժեն վայրենիների պէս ուռաւով կը յարձակեն խեղճ և անզին հայուհիներին վրա, Ս. եկեղեցիին մէջ տեղ մի քանիներն ալ աւելի նախապնդել համար Ս. Անգոնին վրա, կը չարչարեն և կը բռնաբարեն զազանքներ: Յետոյ այդ թշուառ կիներն և աղջիկներն ալ եկեղեցիին հետ բոլորովն մերկացունելով, ամեն բան կ'առնուն կերթան:

Նոյն օր. Վանի մէջ հաւաքուած քուրջ կամաւորներէն մի խումբ այս առաւօտ Վանէն դէպ Բերկի, բանակատն, մեկնած ատեն կըր Բիջին Տէրկիսի գուռն գուրս կենէին, այնտեղ գտած բոլոր հայ նպարաւաճառների խանութներն կողոպտեցին: ճանապարհին վրա մի քանի հայեր գետին պտուղեղացին և կոշիկներն հանեցին ոտքերէն, ասելով թէ՛ Մեք մուսուրման եմք և արեւ կը հագնեմք: Գուք գետնուրներ, էր այդպէս լաւ ոտնամաններ կը հագնէր:

Վանէն մի ժամի չափ հեռի ճահպաղի գիւղն հասած ատեն բռնի կը մտնեն աներն և այգիներն, ինչ որ կը գտնեն, կը խնդրէր ամենին: Ընդդիմացողներն չարաչար կը ծեծեն: Եկեղեցիին քահանան այնչափ կը ծեծեն որ հազիւ կազատի մահէն:

Նոյն օր. Այսօր եկող Նէյն ձեւալէտ-

տիկն զօրքեր երեկոյան սկսան խումբ խումբ և սպառազէն շրջել քաղաքի փողոցներն: հանդիպած հայերն *) կողոպտեցին և ընդդիմացողներն ալ չարաչար ծեծեցին, մինչև իսկ մի քանի փախուած գուռներ ալ բացին և ինչ որ գտան, կողոպտեցին: Հայերն ալ ահ ու զոռ մէջ մնացած փախան քաշուցան իւրեանց տուններ և գուռներն ամուր փակեցին: Փողոցների մէջ հայերի Ֆէսերն յախալակեցին: Յախալակած ատեն ոչ թէ քուրջն կը փախէր, այլ հայն, որպէս զի հանդերձներն ալ չը մերկացունեն և կողոպտեն: Փոխելէն դատ ի՞նչ հնար կար, մինչ իսկ անզին վեճակի մէջ քուրջին ընդդիմանալ՝ փախուած: Այսօր իւրեանց Ֆէս միայն յախալակուած հայերի թիւն երեսունէն անցաւ:

Նոյն օր. Պարսկահայաստանի քուրջեր թուրքահայաստանի Տրպազ աղաի հետ ոխակալութիւն ունենալով, մեծ բազմութիւնով կը յարձակն Տրպազի իշխանութիւնն տակ գտած Վաթմանց անուն հայաբնակ գիւղին վրա և բոլորովն կը կողոպտեն զայն:

Մայիս 9. Հինգ օրէ ի վեր հայերն փախաւով քուրջերէն, չէին համարձակեր իւրեանց խանութներ բանալ: Երեկ կուսակալն յատկապէս մոնետիկ կանչել տարով հրաման հանած էր որ ամեն մարդ շուկայ երթայ խանութներ բանալ: Ուստի, թէև մեծագոյն մաս չանայ այդ սպառնական հրամանին, մի քանիներ հնազանդելով իւրեանց խանութներ բացին: Քուրջեր սոցա խանութներէն շատ բաներ գողցան, շատերն ալ քաղաքի փողոցներին մէջ և Այդեաստն երթալով ճանապարհին վրա կողոպտեցին: Նուկային գուռներն գողելով Աղէքսանդր անուն երիտասարդն մէջտեղ առին և այնչափ անխնայ ծեծեցին որ քիչ մնաց մեռնել, թէ քուրջերէն մին վերջապէս գլխով չտըպտէր: Այսօր ալ բազմաթիւ Ֆէսեր իւրեանց և 20-էն աւելի կոշիկներ յափշտակուեցան:

Նոյն օր. Հոգեոց փառքի տիրացուներէն մի ծերունի մի ձի կը բերէ Վան և կը ծախէ: Այսօր որ կը պատրաստուէր վաճառել վերադառնալ, կտաւարութիւնի աչքին առջև գտուող զօրանցիներն առջևէն անցած ժամանակ՝ այնտեղ բնակող քուրջ կամաւոր զօրքերն գուրս կը խուժեն, կը յարձակն տիրացուն վրա՝ ոյր մօրուք ունենալն ուստական նշան համարելով այդ լուռտական և քաղաքացի մարդ չը տեսած վայրենիներն: անխնայ կը ծեծեն զայն փողոցին մէջ, գուռական լըտես եւս պօռալով: Այնտեղէն անցնող թուրքերն իսկ զթալով խեղճ ծերունիին վրա, կը վկայեն թէ նա ուսու չէ, հանրաճանօթ մի հայ է: Բայց քուրջերն մոխի չեն աներ և կը յարձակն պաշտպանող թուրքերին վրա ալ, ասելով թէ գուք ալ քաղաքի մէջ գետնուրներ հետ բնակուելով խմբուրեր էք գետնուրներէն: Վերջապէս քուրջերէն մին իւր սուր կը քաշէ և կը բռնէ տիրացուն որ մորթէ, բայց այս միջոցին կտաւարութիւնէն ոստիկաններ կը հասնին և կազատին տիրացուն, պաշտոնապէս զայն պատժել խոտախաղով: Կտաւարութիւնն փոխանակ այդ քուրջը պատժել, տիրացուն մի քանի օր բանալ մէջ կը պահէ իբր քուրջերէն ապահով տեղ:

Մայիս 10. Այսօր Նէյն ձեւալէտունի զօրքեր Վանէն մեկնեցան երթալ Բերկի բանակատն: Պնացած ատեն ճանապարհի վրա տեսած հայերն, կողոպտեցին: շատերն ալ գետին պտուղեղացիներով կոշիկներն ոտքէն և գոտին մէջքէն առին միայն, ժամանակ չը լինելով երկարորէն կողոպտել: Չարաչար ծեծեցին:

*) Քուրջեր, այդ լուռտարան վայրենիներ, չէին կրնար տարբերել հայն և թուրքն, ուստի թուրքեր կը մատնէին հայերն:

Տուրքեր և վերադառնողներ շատ եղան: 80-էն աւելի Ֆէսեր խուռեցան:

Մայիս 11. Այսօր Ռշտունիք գաւառէն եկողներ կը պատմէին թէ Նէյն ձեւալէտուն յափշտակել է նարեկացիները և զանազան ծածկոցն և պատուելով իւր զօրքերին համար զրօշակ շինել է:

Մայիս 12. Քուրջեր Վարազի ճանապարհին վրա մի խեղճ հայ գիւղացիէ էլ կը յափշտակեն և կը բերեն շուկայն կը ծախեն: Գիւղացին կենէ քաղաք կը գայ կտաւարութիւնն բողբոջել: Բայց անօգուտ: Յետոյ շուկային մէջ տեսնելով իւր էջ, կը ստիպուի 10 զուռ (մի զուռն մի շահի է) ալ աւելի տալ գնողին և նորէն փնդ իւր էջ:

Մայիս 13. Այսօր քուրջերն անցուղարձ շատ եղող ճանապարհներին վրա նստած, ստիպողական գործերով տունէն դուրս ելած ամեն հայերն կողոպտեցին: Կողոպտուողներին մէջ նշանաւոր եղան Տահպաղի Ս. Սարգիս, Ալեք Փանոս և մի ուրիշ հայ որոց բոլոր հայուստներն հանած, չափելով և վարտելով միայն թողուցիւր էին փողոցին մէջ:

Մայիս 14. Աղթամարի Խաչատուր կաթողիկոսէն սրտաճմլէկ նամակներ եկան Վանի առաջնորդական տեղապահ Երեմիա եպիսկոպոսին և ուրիշ անուններ հայադպիւններին:

Խաչատուր կաթողիկոս այդ նամակների մէջ աղէկաբար իրաւով կը նկարագրէ իւր թեմին մէջ քուրջերէն գործուած բարբառութիւններն: Կը յայտնէ թէ բոլոր հայաբնակ գիւղի կողոպտուած և ամայի դարձած են և այժմ կեանքի վտանգ ալ կայ:

Նոյն օր. Ստոյգ աղբուրէ կիմանալով որ շէյխ ձեւալէտուն 3000-էն աւելի զօրքով գուրս եղած է իւր տեղէն, մինչ Վան 1000-ի չափ զօրքով եկաւ: Իսկ մնացած զօրքերն հայաբնակ գիւղերէն ձեռք բերուած կողոպտուներն ատեն և իւրեանց լեռներ վերադարձր են: Նէյն ձեւալէտունի զօրակիւններ որ տանի առջև որ հասնին, նորա աղքատիկ հայ ամուստներէն մի քանի մէծիւրէն չառած ներս չեն մտնել, ասելով թէ գուռը չափ բաղաւոր և երջանիկ պէտք է համարեն զքեզ որ կարծանաւա մեր այս սուրբ զրօշակ տունը հիւրընկալել: Մի քանի գիւղացիներն ալ առնուն մտնելով ուտելիք ուզած են և ծախելէ յետոյ՝ մեր ատամներն յոգնեցան ասելով 30—40 զուռ առաւմաւարձ (տիւր թիւս) առած են: Գարձեալ շէյխ ձեւալէտունի քուրջեր մի գիւղացի հայ սիւնին կը կապեն գիւղեայն և նորա կին աչքին առջև մինչև առաւօտ կը չարչարեն...:

Մայիս 15. Նէյն ձեւալէտունի զօրքեր Խարալոնիսի գիւղէն անցած ատեն շատ հայերի տուններ և եկեղեցիներ մտնելով կը կողոպտեն: Յարութիւն անուն անձի բերանն կը ծակեն սուրնով և արեւնաթաթախ վեճակի մէջ կը թողնեն:

Նոյն օր. Այսօր Ներկաի շէյխէն առաւօրու 800-ի չափ քուրջ զօրքեր մեծ հանդեսով Վան մտած ատեն ճանապարհին վրա հանդիպատես գտուող հայերին ետէն վաղցնցին մի ասպարեղէն չափ տեղ: Ձեռք ձգածին ծեծեցին և վերադառնելու Վերադառնողներին մէջ նշանաւոր եղաւ Վանի հայ վաճառականներէն Սալախեան Սարգիս ոյր ատամներ ջախջախուած անկարող եղած է հաց ուտել և անկողնի կը ծառայէ:

Մայիս 16. Պօժմանցի քուրջ կամաւորներն ոյց զլուսաւոր է շէյխ Սիւլէյման, ճատալու թաղէն անցած ժամանակ ՄՏԻ. Յովհաննէս Տէմոն կը բռնեն զլեւիւրջ կը կանխեն և մինչև 700 զուռ չը տար, վար չեն առնուր:

Մայիս 17. Քուրջ կամաւորներ Զիլձեան Յարութիւնի և Նազմալուեան Ս. Խաչատուրի տուններ մտնելով ամեն բան կողոպտեցին: Տուրքն մէջ կիներին և տղայներին հանած աղաղակէն քաղաքն իրար անցաւ:

կառավարութիւնն փութաց ոստիկաններ առաջել, բայց չառ քիչ բան կրցան յետ առնուլ քուրդերին ձեռքէն:

(Կը շարունակուի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Բէլլորդից հեռագրում են, որ սերբիական զօրքերը չառապով զինաւորվում են: Ոգոստոսի 1-ին նոյն կողմերովն զէպի սահմանը: Չինուտական պաշտօնականներն հրամայած է երկու օրվայ ընթացքում իրանց նշանակած տեղերը զբաղեցնել:

— «Times» լրագիրը տեղեկացել է, որ կաղիւն-Բէլլ յայտնել է աւստրիական միւնիստր Յիւլիւս, իբր թէ բարձր, Կուսը խաղաղական պայմաններ կառավարել Բուսաուտանին, եթէ այդ վերջինը բաւականապէս իջնալարի ինքնավարութեամբ և բրիտանացի նախագահականների նշանակելով:

— Կ. Պոլսից հերքում են այն լուրը, իբր թէ Միջին-Փայան թիւրքաց կառավարութեան կողմից առանձին յանձնարարութիւն է ստացած կերպարում:

— Մուլէյման-փաշան, ինչպէս հազորդում են ռազմիկները, հրաման է ստացել ուժով անցնել Բաղդադէն արքերը և թիւրքաց զօրքերի կենտրոն կազմել արքերի հիւսիսային կողմը: Այս մէջ-Եւր-փաշան, որ 40,000 զօրք և 14 թնդանոթ ունի, գտնվում է Բաղդադի մօտ: Լուր կայ

իր թէ թիւրքերը կրկին առել են Էնիզադը և Կազանլի: Շիպա անցքը Բաղդադէն առերկրում զեռ ուսուցաց ձեռքբան է:

— «Միջազգային հեռագրական ընկերութիւնը» հազորդում է որ յուլիսի 27-ին (օգոստոսի 8-ին) Իշլ քաղաքում Գերմանական և Աւստրիական կայսրերին մէջ տեսակցութիւն եղաւ:

— Կ. Պոլսից հերքում են այն լուրը, իբր թէ թիւրքական զինաւորութիւն ունի Բուսաուտանին խաղաղական պայմաններ առաջարկել:

— «Голосъ» լրագիրն Վիեննայից հեռագրում են որ «Deutsche Zeitung» լրագիր Բուխարէստից ստացած տեղեկութեանը նայելով ուսուցաց զօրքը Պէլլիայի մօտ երկու անգամ անաջողութիւն ունենալուց յետոյ, վերջապէս կատարելապէս ջարդել է թիւրքերին և վեր առաւ Պէլլիա: Եւր-քաղաքները համալրել և Բուլղարի զէմ կրկին սկսվեցան:

— Եգիպտոսի խեղդիւր կրկին կամենում է օգնական զօրքեր ուղարկել թիւրքաց սուլթանին:

— Եւրոպական լրագիրները հաստատում են այն լուրը, որ Յուսաուտանի և Սերբիայի մէջ թիւրքիայի զէմ դաշն կապելու մասին բանակցութիւնները ապարդիւն եղան:

— Վիեննայի կայսրը աւստրիական կայսրի հետ Իշլ մէջ տեսակցութիւն ունենալուց յետոյ թողեց այդ յաղաքը յուլիսի 28-ին (օգոստոսի 9-ին): Կրկին կայսրերի մէջ տեսակցութիւնը չառ բանակաման էր, և ջոյց էր տալիս որ երկու երկրների մէջ կատարեալ համաձայնութիւն է տիրում:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Դ Ն Ն Ե Ր

ԱՍԵՐԿԱՐԱՆ ԱՍՏՆԱՐԱՅՑ

ԴՈՍՏՈՐ Լ. ԳԵՐՄԱՆՈ-ԲԵՐԿՍԵՐ

Մասնագէտ արուեստական առամներ չինուտ և ոսկով պոմբուս:

Պատուար անդամ Լճագոնան առամնա:

Գտնվают на углу Кузнецкого моста и Петровки, домъ Шорниной, входъ съ Петровки, противъ гостини. Франція.

բուժական հիւանդանոցների

8-25

Երևանի Թեմական դպրանոցում ուսուցիչի համար խնդրվում է մի ուսուցիչ, որ չորս-թեմական 24 դաս պէտք է տալ, տարեկան մինչև 800 աւարի նշանակումով վարձով: Զանկացողը պէտք է արքունի մի օր և է միջնակարգ դպրոցի ուսման ընթացքը գտնել, աւարաբան լինել և ուսուցչական շատ կոնվուզիոն եր ու մրցանակ իր առնանա:

Երևանի Հարց դպրոցաց Տեսուչ Սարգիս Բէլլ-Նապարեան

1877 ամի, 17 յուլիսի, Երևան:

2-3

- Վարս եկաւ Փորթո Տանդիսի երկրորդ շրջանի առաջին համարը: Բուխարէստի թիւնն է:
- I. Նաթան Իմաստուն, զործ Լէսինգի, թարգ. Գ. Բարխուդարեանցի:
- II. Տասն և իննեքորդ զարու: Նշանաբանը. Ս. Պայասանեան:
- III. Բանդիէրա եղբայրները (Կապիտան Կարապետ Կարապետի թիւնն) յօդ. Ստեփան:
- IV. Բանաստեղծութիւններ, Պետկովից և Բայրոնից, Գ. Բարխուդարեանց:
- V. Ներսէս Ա. շատար կցին վարդապետ ժամանակ. Ա. Նրիցեանց:
- VI. Իմ թատրոնական ճանապարհորդութիւն թիւնն Գ. Չմէկեան:
- VII. Գերդաստան, Կասախուսութիւն պրօֆ. Ադ. Ֆրանկի:

ՄԱՏՆԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

- VIII. Միւս 2 երազ, Ազգային դատարանութիւն. Գրիգ.
- IX. Բարեկամութեան զօհեր, զործ Զօֆմանի, Հաւատարմութիւնը առնել արդիւնքներին յաղթում է, զործ Զօֆմանի. Փոքրիկ Հենրիկոսի պատմութիւնը. Գրիգ:
- X. Արգիոս հայերէն. հրատ. Այլուրթի, Մ. Անանեան:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

- XI. Տաճկան Հայաստանի անկախութիւնը:
- XII. Հայերի մասնակցութիւնը Ռուսաստանի Ազգրկովստում արած տիրույթութիւններին մէջ. պատմական տեսութիւն. Ա. Նրիցեանց:

ՔԱՐԱՔԱՐԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

- XIII. Արեւելեան պատերազմը:
- IV. Գաղտնի վարժապետի պատմութիւն. զործ Էրկման Շառլանի:
- XV. Յայտարարութիւններ:

Փորձի բաժանորդագրինը առնել 10 մանէթ է:

Ստորագրուել կարել է Թիֆլիսում՝ «Փորձի խմբագրատանը», Հ. Կեֆիանցի ծխատոխի խանութում և Զարարիս Գրիգորեանցի գրախանութանում: Ստորագրողները կարող են զիմել խմբագրի հետեւալ հասցէով—Тифлисъ. Въ Редакцію Армянскаго Журнала «Пордзъ». Իսկ արտասահմանից—Tiflis, Redaction du Journal Armenien «Pordz».

Խմբագիր—հրատարակիչ Արգար Յովհաննիսեան:

АРХИВЫ И ДОКУМЕНТЫ
СТРОП DE RAIPORT IODE
DE CRIMANT ET C^{ie}

Средство это одерживаетъ въ себѣ іодъ въ соединеніи съ сокомъ противу цинготныхъ растеній: хрѣнъ, лопухъ, трава и пресекон. Извѣстныя въ врачеваніи лимфатическаго и зоботупниковаго абнѣвъ, выско преденно кѣрпа. Кѣрпъ и фангоу, изъ гегенго стебли, имѣють выжиманія слѣдъ: Strop iodé de Crimant et C^{ie}, а равно и подлѣтъ, изъ вокрытъ торышнѣ. — Произведенъ въ Бѣлѣ аттестатъ Россіи.

ТИФЛИСЪ, У ПУРПНОВА

BOUQUIN MARIÉ
DENTIFRICES RIGAUD
8, RUE VIVENNE, 8
PARIS

BOUQUIN MARIÉ
DENTIFRICES RIGAUD
8, RUE VIVENNE, 8
PARIS

CREME DENTIFRICE SOLIDITEE
(Strop de Crimant et C^{ie})
Этого прекраснаго средства придаютъ зубамъ отличный блѣкъ, и въ нѣмъ не имѣетъ вкуса. не предоставляя при этомъ ни одного изъ неудобствъ, обыкновенно имѣющихъ зѣбныя порошкы, и не имѣетъ запаха. Нѣсколько капель въ стаканъ воды достаточно, чтобы дать зѣбамъ совершенно бѣловатое и блестящее пятно. — Произведено въ Парижѣ.

DENTIFRICE RIGAUD
(Strop de Crimant et C^{ie})
Въ нѣмъ въ этомъ зѣбномъ зѣбнѣ имѣетъ этому продукту отличное пятно. — Произведено въ Парижѣ.

ՕՐԱՏՈՍՈՒ 4.				Տ Ե Վ Ե Կ Ա Յ Ո Ց Ց				ԹԻՖԼԻՍ 1877.			
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Օգոստոսի 4-ին)		Բ.	Կ.	ՀԱՌԱՎԵՐ		ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱՆ ԹՈՒՎ.		ՓՈՍՏ		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ	
Ոսկին (պորտուգալական)	7	88	—	Կովկասի և Ռե-	—	Թիֆլիսից մինչև Փոթի	—	1) Ամեն տեսակ թէ նա-	—	գուր արական, երեք-	—
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1225	—	—	զրկովասի րա-	—	(ճանապարհորդների գնացքը)	9	Պոստատան նամակը	8	Թիֆլիս. Ս. Փ. Չեր յո-	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1090	—	—	զարկերը	1	ժամին 21 րոպե առաջատան	—	Գերմանիա, Ա. արիա	8	գուածի մասին զեռ ոչինչ չենք	—
Վիդրիչին 50/0 առաջի փո-	—	—	—	Բուսաուտան	2	Մինչև Միխայիլովո (խառն	—	Ֆրանսիա, . . .	8	կարող ստել. Կը կարդանք.	—
խառնութեան տոմ. 100 »	205	50	—	Աւստրիա	3	գնացքը) երկրորդան 5 ժամ. 18	—	ամեն օր.	8	—ԲԱՂՈՒ. Անգլա պարոնի.	—
Երկրորդ 50/0 վիդրիչին »	206	50	—	Անգլիա.	4	րոպե:	—	երկաթուղուց	8	Շատ հետաքրքիր են ձեր հա-	—
Մարտիկ կուրսը 262 Ֆ. 50 ս.	100	—	—	Գերմանիա.	2	—	—	ամեն օր. Նուրսու տրակ-	8	զորգված լուրերը, բայց ավստ	—
Լճագոնի կուրսը Օղեսայի	—	—	—	Ֆրանսիա . . .	3	75	—	տից՝ չորեքարթի և կի-	8	որ բոլորը չէ կարելի տպել:	—
վրա.	9	48	—	—	—	—	—	րակի. Բելիկիւլիւլի առ-	8	—ԲԱՂՈՒ. Յ. Տպեցիք. Շա-	—
Վենայի կուրսը ամէ 136 զէ.	100	—	—	—	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	րունակեցէք զընդ:	—
Դարեմի բարաթը.	5	—	—	ԱՆԻՐԿԻՎԱՍՏԱՆ ՍՄՆ-	—	—	—	րակի. Բելիկիւլիւլի առ-	8	—ԿԻՆՎ. Կանխածանօթի, Չեր	—
Աւստրական բանիկի ալ-	—	—	—	ԿԱՐԱՐՁԱԿԱՆ ԳՊՐՈՑ	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	յոլուածի մէջ, որ խկապէս յո-	—
ցիան 200 մ.	265	—	—	(Վէրայի վրա № 38)	—	—	—	րակի. Բելիկիւլիւլի առ-	8	զուած չէ, այլ առանձին լու-	—
Փոթի թիֆլիսեան երկա-	125	—	—	Ծննդականների ընդ ու-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	րեր են, կամ բաւ է տոնք ա-	—
թուղու ակցիան 125 մ.	—	—	—	ն եւ լուծիւնը ցերեկվայ	—	—	—	րակի. Բելիկիւլիւլի առ-	8	ռանձին ծանօթութիւններն են,	—
Շաքարը բրոցիւն.	8	—	—	և գիշերվայ ամեն ժամա-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	կան տեղեր որ մենք բարբոթին	—
միւս տեսակը.	7	90	—	նակ, օրը 50 կոպէկ վար-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	չենք հանդիմանում: Չենք հա-	—
շաքարաւաղը.	6	90	—	ձով իսկ չքաւորներին ան-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	կանուած ում վերաբերվում	—
արանդիւր.	7	80	—	վարձ, Առանձին սենեակ-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	«Պոստատան, թիֆլիս դատո-	—
մաքուր վճարած	12	—	—	ներում ամիսը 30 — 50	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	զուածի մասին զեռ ոչինչ չենք	—
Բամբակը Երևանու Ա-	—	—	—	րուր: Կանանց հի-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	կարող ստել. Կը կարդանք.	—
մերկայի սերմից.	—	—	—	ւան դուծիւնը ցերեկվայ	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	—ԿԻՆՎ. Կանխածանօթի, Չեր	—
Միւս տեսակը հին սերմից.	5	75	—	և գիշերվայ ամեն ժամա-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	յոլուածի մէջ, որ խկապէս յո-	—
Բուրգը Թեմիչի.	3	—	—	նակ, օրը 50 կոպէկ վար-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	զուած չէ, այլ առանձին լու-	—
» Թարաքամի.	5	—	—	ձով իսկ չքաւորներին ան-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	րեր են, կամ բաւ է տոնք ա-	—
Ալիւր Շորագալու.	1	30	—	վարձ, Առանձին սենեակ-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	ռանձին ծանօթութիւններն են,	—
» Երևանի.	1	20	—	ներում ամիսը 30 — 50	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	կան տեղեր որ մենք բարբոթին	—
Գարին.	8	50	—	րուր: Կանանց հի-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	չենք հանդիմանում: Չենք հա-	—
Մումը բնածարպի (steap.)	12	—	—	ւան դուծիւնը ցերեկվայ	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	կանուած ում վերաբերվում	—
Սետաքս Նուխլայ.	120	—	—	և գիշերվայ ամեն ժամա-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	«Պոստատան, թիֆլիս դատո-	—
Կախի թուր.	50	—	—	նակ, օրը 50 կոպէկ վար-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	զուածի մասին զեռ ոչինչ չենք	—
Կոկոնը Նուխլայ (բոմ.)	27	—	—	ձով իսկ չքաւորներին ան-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	կարող ստել. Կը կարդանք.	—
Ֆրիզանը (լաւը) Ագու-	—	—	—	վարձ, Առանձին սենեակ-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	—ԿԻՆՎ. Կանխածանօթի, Չեր	—
Կիւսի.	35	—	—	ներում ամիսը 30 — 50	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	յոլուածի մէջ, որ խկապէս յո-	—
» Ֆէլն մոկի.	27	—	—	րուր: Կանանց հի-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	զուած չէ, այլ առանձին լու-	—
» Լիվանի.	22	—	—	ւան դուծիւնը ցերեկվայ	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	րեր են, կամ բաւ է տոնք ա-	—
» Դարախկոյինը.	18	—	—	և գիշերվայ ամեն ժամա-	—	—	—	թակից երեքարթի և չա-	8	ռանձին ծանօթութիւններն են,	—